

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրաւէրով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում սոյն թուի Մայիսի 8—12 օրերին, տեղի ունեցաւ Հայ Առաքելական Եկեղեցու նուիրապետական Աթոռների բարձրաստիճան հոգևորականաց խորհրդակցութիւն՝ Հայաստանի Հանրապետութեան նախագահի որոշումով «Հայաստան» համահայկական հիմնադրամի ստեղծման և գործունէութեան ծրագրերին ծանօթանալու համար, նպատակ ունենալով Հայ Առաքելական Եկեղեցու ամբողջական նպաստը բերելու ի խնդիր այդ հայրենաշէն գործի հաջողութեան:

Վերոյիշեալ խորհրդակցութեանց մասնակցեցին Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգէն Ա Կաթողիկոսը, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Կաթողիկոսութեան ու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռի միաբան և թեմական առաջնորդ սրբազան արքեպիսկոպոսներ ու եպիսկոպոսներ՝ Հայաստանից և արտասահմանից, ոգեշնչուած ազգանուէր զգացումներով:

Նորին Սուրբ Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոսը, ցաւօք, չկարողացաւ անձամբ մասնակցել խորհրդակցութեանց առողջական պատճառով:

Յետ կարծիքների փոխանակման, ժողովը որոշեց, որ Հայ Առաքելական Եկեղեցին՝ «Հայաստան» հիմնադրամի նպատակների իրականացման ի խնդիր՝ իր անվերապահ ու ամբողջական նպաստը բերի իր բոլոր միջոցներով, համաձայն սոյն խորհրդակցական ժողովում որդեգրուած նախատեսութիւնների:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ

Ս. Էջմիածին,
12 Մայիս 1992